

Քրիստոս: Բ. Դ զիտելու է, որ այլուր իսկ ձեռագրաց մէջ Մովսիսի ընծայուած է միակամեայց Տրամախօսութիւն մի ընդ ֆաղկեդոնա-կանս, որուն անհարազատութիւնը՝ բնաւ տարակոյս չի վերցնէր:

Դ. Յովհանն երզնկացի և Արիստակէս ոմն, որք շարունակեցին զմեկնութիւն Մատթէի՝ զոր Ն. Շնորհալի մինչև եօթներորդ գլուխն հասուցած էր, ֆրիստոսի այլակերպութեան մեկնութիւնը գրեթէ բառ առ բառ և քայլ առ քայլ Ոսկերերանի 57 ճառէն փոխ առած են. իսկ վարդափառի ճառէն ոչ ինչ: Արդ, այս երեւոյթս իսկ նշան է, թէ ոչ միայն այդ ճառը խորենացւոյն չէր, այլ գուցէ թէ այդ ժա-մանակին և ոչ իսկ ամենուն ծանօթ էր այն. ապա թէ ոչ՝ կարելի բան չէ, որ անտի ևս հատուածներ մէջ չի բերէին, որ աւելի ճոխ և հրեշտակաւորիչ կ'երևի բան զհամառօտագիծն Ոսկերերանի. թմոզ զի խորենացւոյ անունը միայն շատ էր գրաւել նոցա գուշն և զուրուշ: Պարմանալի երեւոյթ մի է և այս, զի Հայոց մէջ բաց 'ի այս ճառէս, և մի այլ ճառէ՝ որ եղիշէի ընծայուած է (Սոփ. Հայ. հտ. ԺԲ. էջ 5) վարդափառի վրայ գրուած ուրիշ ճառ ձեռքերնիս հասած չէ:

Ե. Իթ Ճառընտրի մէջ, զոր օրինակեց Հ. Ն. Սարգիսեան Առաքելոց վանքի երկաթագիր և ամենահին ճառընտրէն Սողոմոնի Մաքե-նոցաց վանահօր, վարդափառի ճառը Դաւթի Անյաղթին ընծայուած է, այսպէս. «Դասքի փիլիսոփայի աւաստեալ Նիրբողեան յաղազս վարդափառի»: Արդ այս երեւոյթէս կարելի է հետեցնել, թէ վար-դափառի ճառն իսկզբան անդ առանց հեղինակի անուան էր, որով ոմանք ըստ կամս Դաւթի ընծայեցին զայն, իսկ այլք Մովսիսի:

... Շարունակելի

Հ. ԲԱՐՈՆՆ, ՍԱՐԳԻՍԵԱՆ

ԵԶՆԻԿ ԵՒ ԻՒՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆ.



Եզնիկ, որ 'ի գեռատիս հասակէ՝ յունական պայծառ երկնքին ներքև՝ ծը-ծեր էր այն իմաստասիր գօղը, հմտացեր էր յոյն իմաստասիրաց ամէն վա-րդապետութեանց, և իւր մտաց մէջ ամբարներ էր Ս. Գրոց. և Ս. Հարց գե-տութիւնքը, զորս և յաճախ նրբին խազարկութեամբք կը համեմատէր ընդ արտաքին իմաստութեան, կ'իջնէ արդ յասպարէզ (յերբորդ գիրսն) կռուիլ և ոգորիլ իմաստասիրաց պարուն գէմ: Բնաւ ոչ մի պարագայի մէջ Եզնիկ չի մնար ստորինքան զհակառակորդսն. իւրաքանչիւրին գէմ խօսելու միջոց՝ իրինց՝ յատուկ և անձնական զէնքեր կը գործածէ և կը յաղթահարէ զս-նոնք, շատ համարելով իրեն պաշտպանողական զէնք զՍ. Գիրս միայն. և ամօտ ահա իմաստասիրաց հակառակ՝ իմաստասիրօրէն կը հակաճառէ, յուրում հաւատարապէս կը փայլի թէ՛ նորա հմտութիւնն՝ իմաստասիրական գրութեանց մէջ, և թէ՛ 'ի բնական գիտութիւնս՝ մանաւանդ յաստղաբաշ-խականին ունեցած բարդաւառ և զօրաւոր միտքն:

ինչպէս նախնադար ծանուցի, Երրորդ գիրք ըսելու միջոց պէտք է գիտել, որ նորա սկիզբն խառնեալ է Երկրորդ գրոց հետ, զոր հաւանօրէն պէտք է փնտռել յէջս 183-187, ուր արտաքին իմաստունք յիշելով նոցա մուար գրութիւնը կը հերքէ. իսկ այն՝ որ իբրու սկիզբն կամ առաջին գլուխ կը սկսի, « Լուսին, ասնի, քան զարեգակն » և այլն, հարկ է իբրու գլխաւոր մասն մի կամ բաժանումն համարել։ Այնքան յայտնի է անժխտելի է այս, որ ամենայն մտադիր ընթերցող իսկոյն պիտի անդրադառնայ և հաստատէ նոյնը. — վասն զի Բ գրոց այն վերջին մասը (183-198), ուր տիեզերաց և օդաբանական երևութիւց վրայ կը խօսի, բնաւ ամենեւին կապ չունի Պարսից գեներն հետ. և ընդհակառակն՝ ներքին և սերտ կապակցութիւն մ'ունի Գ գրոց հետ, թէ՛ ըստ նիւթոյն և թէ՛ ըստ ոճոյն։ Դարձեալ, ոչսու բանիւք « Լուսին, ասնի, քան զարեգակն » և այլն, ուր կը պակսի անուն բային և չէ բացատրուած թէ ո՞րք են ասողքն, յայտնի կը ցուցնէ թէ անմիջական շարայարութիւն է նախորդ իմաստին կամ պարբերութեան. — Այս բանս յայտնի կ'ըլլայ նաև այն խօսքերէն՝ զոր կըսէ յէջն 198. « Բայց քանզի (նոքա) 'ի նմին յամառութեան կան... ոչ հեղգասցուք և այնմ ևս առնել պատասխանի » . տակաւին խօսքը անոնց գէմ է, անձինքը չ'են փոխուիր, թշնամիներն և կոհնէ նոյն է, այլ միայն զէնքերն և կուռոյն դիմակն կը փոխուին։

Սոյն գրոց մէջ, (ինչպէս նաև 'ի Զորորդ գիրքն), մի ուրիշ զարմանալի բան ևս կը նկատուի. նախագիտելի ծանօթութիւնն, կամ անձանց վրայ ուրոց գէմ պիտի խօսի, և կամ այն խնդրոց և վարդապետութեանց վրայ՝ զորս պիտի հերքէ, փոխանակ գրոց սկիզբը գնելու, մէջտիգերը կը գնէ։ Օրինակ իմն, Յունաց իմաստասիրական գրութեան կամ դպրոցաց գլխաւորքը, որոց գէմ կ'աւղղէ Եղնիկ յատկապէս իւր խօսքը, ինչպէս են, Պիւթագորեսնք, Պլատոնականք, Ստոյիկեանք, և այլն, մէջ կը բերէ յէջն 204-208, որ ըստ օրինի կարգաբանութեան հարկ էին առաջին տեղին դրուել, սոսկ տեղեկութիւններ լինելով. և ապա գրքին մէջ հարկ էր կարգաւ մի առ մի հերքել զանոնք, ինչպէս կ'ընէ Ս. Եպիփան, յորմէ բառ առ բառ թարգմանուած է այս ամբողջ հատուածս։ Եւ ահա՛ կը գնեմք աստ գէմ առ գէմ հայերէնը և Ս. Նոր ճառին լատին թարգմանութիւնը, որ աւելի մատչելի ըլլալով մեր ընթերցողաց շատերուն, ևս աւելի յայտնի պիտի տեսնուի թարգմանութեանց ճշգրտութիւնն և զանազանութիւնն, որք թէ պէտ մէկ աղբերէ, այլ զանազան դարուց և պարսգայից մէջ թարգմանուելով, հայոց գեղեցիկ ոճոյն և վսեմ լեզուին գիմաց կը խաւարի գոգցես լատինականն։

1. Լուսաւորաց վայ խօսելու միջոց, օգտուեր է Եղնիկ Ս. Բարսեղ Վեցորէից ճառերէն. ինչպէս օրինակ իմն, բաց յայլոց տեղեաց, Եղնիկայ խօսքերն (185-187) յար և նման են Ս. Բարսեղ Վեց. (114-115) իմաստից և օրինակաց։ Ս. Բարսեղ կ'ըսէ. « Ձի յորժամ ընդ ծագել արեգականն մթազոյն ելանիցն, և արեան և կայ. ծական նշանակ ունիցի գճառագայթիւք... և ամպն ևս քան զկես բազմասցի... զսաստիկ անձրևաց յայտ առնեն », և այլն. իսկ Եղնիկ կ'ըսէ. « Քանզի ընդ ծագել արեգակն... Թանձրացեալ և ամպացեալ օդն, սակաւիկ մի արգելով զնոյնն՝ կարմրացուցանէ միայն զարեան և ոչ մթացուցանէ. ուստի երևի՝ թէ անձրեկ նշանակ է » . և այլն։

ԵԶՆԻԿ (204-208 էջ)

Ս. ԵՊԻՓԱՆՆԻ

ՊԻԹԱԳՈՐԱՍԻԱՆՔԸ և ՊԵՐԻՊԱՏԵՏԻՔԸ
Կեանքն միութիւն և խնամակալութիւն ա-
սեն, և չքոհնէլ աստուածոց: Եգ կրօնս Պիւ-
թագորոս զնշաւորաց միս չճաշակել, և
'ի գինւոյ ժուժկալել: Եւ 'ի լուսնոյ և 'ի
վեր զամենայն ինչ որ է՝ անմահ համարել,
և որ ինչ նորա 'ի Ներքոյ՝ մահկանացուս:
Եւ փոփոխուին շնոց 'ի մարմնոց 'ի մար-
մնս մինչ ցանառուն և ցճճիս անգամ: Եւ
(հնգամայ) լուսութեան կրօնս սահմա-
նեաց, և յետոյ զիւր անձնն աստուած ա-
նուանեաց:

Իսկ Պլատոնեանքն, աստուած և հիւշ
և իջոս, որ առաջինն նիւթ է, և երկրոր-
գուն՝ առանձինն ինչ ուրուք: Եւ զաշխար-
հոս՝ արարած և եղծանելի: Եւ զունշ՝ ան-
արար և անմահ և աստուածական, որոյ
երեք մասունք են՝ բանական, ցանական
և ցանկական: Եւ զկանայս հասարակաց
ամենեցուն համարել, և մի ումք մի կին
առանձինն ունել: այլ զոր արքն կամիցին և
կանայքն ախորժիցեն, այնք ընդ այնս լի:
Ինչ, Եւ փոփոխունն շնոց յայլ և այլ
մարմնս մինչև ցճճիս և ցողորմն անգամ:
Միանգամայն և աստուածս բազումս 'ի
միջէ ելեալ սահմանէ:

Իսկ Ստոյիկեանքն մարմն զամենայն
ինչ եգին, և զերեւելի աշխարհս աստուած
համարին: Իսկ ոմանք 'ի հրոյ էութենէ
համարին ունել սմա զբնութիւն: Եւ աս-
տուած զմիտս սահմանեցին, իրեւ թէ
չունշ ամենայնի իցէ տարերն երկնից և
երկրի. մարմնն նմա՝ զամենայն ինչ որ է՝
եգին, և այն՝ զլուսաւորան: Եւ զմարմնս
ամենեցուն կորստականս, և զունշս փոփո-
խելիս 'ի մարմնոց 'ի մարմնս:

PYTHAGOREI, sive Peripatetici, monadem et providentiam asseruerunt; Diis, qui vulgo habentur, sacrificare, animatis vesci, ac vino uti prohibuit Pythagoras. Idem quae ab luna sursum patent, immortalia, quae inferiora sunt, mortalia dicebat. Animas e corporibus in alia corpora, etiam animalium ac bestiarum transfundi. Ad haec (quinquennale interim) silentium observari praecepit: ac postremo Deum haberi se voluit.

Platonici (vero), Deum et materiam, ac formam constituerunt. Mundum genitum, ac corruptioni obnoxium: animam ingentitam et immortalem, ac divinam arbitrati sunt. Hujus tres esse partes: unam ratione praeditam, alteram qua irascimur, tertiam qua concupiscimus. Communes omnibus uxores esse voluit; nemo ut privatam obtineret, ac praecipuam: sed ut quilibet quarum vellet copiam haberet. Idem animarum in varia corpora, etiam bestiarum, transitus affirmabant. Deos denique composites ab uno esse productos.

Stoici corpus universum esse definiunt, et spectabilem hunc mundum Deum esse statuunt. Nonnulli etiam ex igne naturam illius constare defendunt. Deum quippe mentem esse putant, ac vastissimae totius molis, caeli terraeque videlicet animam. Cujus corpus, ut dixi, totum hoc sit universum, oculi vero, sidera: omnium interire carnem, et animam in diversa transire corpora sibi persuadent.

1. S. Epiphanius Constantiae episcopi adversus LXXX haereses. Սոյն գրոց ըս-
կի զոր գրուած է Ս. Նոր մի վարդապետական թուղթն առ Ակակիոս և Պաւղոս քա-
հանայս, որ ամբողջ գրքին և առաջին գլխոյն յառաջարան կազմելով, համառոտ
անդէկութիւններ կու տայ հերքելի հերետիկոսաց և անոնց վարդապետութեանց
մասին. աստի է ահա այս անգ մէջ բերուածն:

Իսկ Եպիկուրեանքն առնէ, առհասարակ անբաժին մարմինք էին զառաջինն, և նախ եկաց ամենայն ինչ: Եւ վախճան լաւութեան զցանկութիւն սահմանելին: Եւ թէ ոչ Աստուած գոյ, և ոչ խնամակալութիւն որ վարիցէ զամենայն: Այս են կրօնք փիլիսոփայից:

Բայց Հեթանոսութեան սկիզբն 'ի Սերուբայ ժամանակաց անտի եզել. զի որ լաւ որ եկեալ յաշխարհ մեռանէր, վասն յիշատակի քաջութեանն զգատկերն եւ րանգոր 'ի նկարու հանէին, և անտի ուսեալ ախմարաց՝ ապաւ 'ի պաշտօն առնուին: Եւ կոչոց և գրօշնոց հանգամանք՝ առ Թարայիւ հարբ Արաւհամու, և անտի իւրաքանչիւր որ իւրով արուեստիւ զնոյն գրօշն. գործին՝ գարանութեամբ, հիւսնն՝ հիւսնութեամբ, արծաթագործն և պղնձագործն քարակոփ և բրուտ՝ իւրաքանչիւր արուեստիւ: Եւ անտի կարգեալ հասանէր յԵփրատացիս և 'ի Բարեկտացիս և 'ի Փոնիգացիս և 'ի Փիւնիկեցիս գործ գրօշագործութեան և խորհուրդք նորին. և ապա 'ի Հելլենոս. որ են Յոյնք, առ Կեկրոպեաւ, և ետ յետոյ՝ առաւել աստիք առ Կունան և Բեաւ և Դիաւ և Ապողոնիւ և առ այլովք բազմք, զորս մի ըստ միովն աստուածս անուանէին: Հելլենք կոչին Յոյնք՝ յառնէ միովն. որում Հելլենոս անուն էր յԵլլագաւոց աշխարհին: Բայց այլք ասեն՝ եթէ 'ի Հիթենոյն, որ յԱթենս բուսաւ իւրովի՝ վասն զի Հիթենի յառնարէն եղեալ կոչի:

Բայց Յոյնք 'ի Յաւանայ՝ որ էր մի յաւաշխարհաց աշաարակագործութեան, վասն որոյ Մերովպս ամենեքին կոչին յաղաքս բարբառոյն բաժանելոյ. քանզի բաժանուա՞ն յունարէն մերիսմոս՝ կոչի:

Epicurei atomos et individua corpora, similibus constantia partibus, et infinita, rerum omnium principium ac finem esse docuerunt. Summum bonum in voluptate posuerunt: Deum ac providentiam ab rerum administratione sustulerunt.

Idolorum cultus a Seruchi temporibus initium habuit. Ac primum eos, quos in honore quondam habuissent, qui memorabile quiddam in vita fecerant, ac fortitudinis et roboris illustre specimen ediderant, depingere coloribus et assimilare solebant... (eosque) sibi deos finxerunt. Postea vero ab Thare patris Abraami tempore simulachris ac statuīs eundem errorem idololatriae propagarunt... Nam et architecti, sectis lapidibus, argentarii et aurifices, nec non fabri sua quique materia, ac reliqui deinceps effigies moliti sunt. Primi omnium Aegyptii, ac Babylonii, nec non Phryges, ac Phoenices simulachrorum ac mysteriorum auctores extiterunt. A quibus pleraque sunt ad Graecos translata: jam tum ab aetate Cecropis, et deinceps. Postea vero longo demum intervallo, Saturnum, Rheam, Jovem, Apollinem, ac reliquos deos celebrare cœperunt. Graeci nomen ab Hellene quodam sortiti sunt, qui in Graecia degens ei regioni appellationem indidit. Sunt qui ab elaea, hoc est oliva, quae Athenis exorta est, nuncupatos esse velint.

Hujus generis auctores ac conditores Jones fuerunt: qui ab Javan quodam appellati sunt, uno ex iis, qui turrim extruxerunt. Quam ob causam Meropes omnes vocati sunt ab divisione linguarum....

Եւ առաջին կրօնք՝ խառնականք և սկիւ-
թականք և Հեթանոսականք կոչէին, մին
չեւ եկն Աբրահամու աստուածապաշտու-
թիւնն և ազաւաղեաց զայն:

Եւ յուգայութիւն 'ի Յուգայէ, որ է
Հրեութիւն, 'ի չորրորդէ որդւոյն Յակո-
բայ: յորմէ Թագաւորութիւնն էր, և կա-
լաւ անուին զամենայն ազգն յուգայական:

Ad hanc usque diem, inter barba-
ram, scythicam, graecamque super-
stitutionem interjecta, donec cum Abra-
ami pietate coaluit.

Tum vero Judaismus, ab Juda
quarto Jacobi filio, perfectum Juda-
ismi nomen obtinuit.

Յետ այսր, կը դառնայ Եգիպտոսի յառաջին բանս իւր, կը խօսի լուսնի լու-
սոյն, արեւուն և աստեղաց շարժմանց վրայ, մէջ կը բերէ բնութիւնն երեւոյթ-
ները. և միով բանիւ, 199-204 էջերուն մէջ բացատրուած իմաստասիրոց
կարծիքները կը հերքէ: Այս մասիս մէջ դարձեալ Հետեոյ կ'երեի Եգիպտոսի
Ս. Բարսեղի Վեցորէիցի, որ նոյն ժամանակաց ամենայն բնական և աստղա-
բաշխական գիտութիւնները բովանդակելով իւր մէջ, եղել է իբրոս Հասարա-
կաց աղբիւր մի, ուստի կ'օգտուէին թէ ժամանակակիցք և թէ ապագայ
դարուց մատենագիրք, ինչպէս Ս. Ս. Սիրոսիոս և այլք, իսկ առ միւր Անա-
նիա Երեւակունին՝ — Եւ ապա յէջն 220-250, մի առ մի զօրաւոր փաս-
տեղութիւնք և հակասութիւնք յայտնապէս կը կշտամբէ. յորում գեղե-
ցիկ կը փայլէ քրիստոնէական իմաստասիրութեան անարատութիւնն և ուղ-
ղութիւնն, որ Հասարակարկէ թէ չսփառանք և կեղծ առաքինու-
թիւնք կը հերքէ գլխաւոր իմաստասիրաց գրութիւնքը, և անոնց խօսից ան-
տեղութիւնքը և հակասութիւնքը յայտնապէս կը կշտամբէ. յորում գեղե-
ցիկ կը փայլէ քրիստոնէական իմաստասիրութեան անարատութիւնն և ուղ-
ղութիւնն, որ Հասարակարկէ թէ չսփառանք և կեղծ առաքինու-
թիւնք կը հերքէ գլխաւոր իմաստասիրաց գրութիւնքը, և անոնց խօսից ան-
տեղութիւնքը և հակասութիւնքը յայտնապէս կը կշտամբէ. յորում գեղե-
ցիկ կը փայլէ քրիստոնէական իմաստասիրութեան անարատութիւնն և ուղ-
ղութիւնն, որ Հասարակարկէ թէ չսփառանք և կեղծ առաքինու-
թիւնք կը հերքէ գլխաւոր իմաստասիրաց գրութիւնքը, և անոնց խօսից ան-
տեղութիւնքը և հակասութիւնքը յայտնապէս կը կշտամբէ:

Յետ խօսելու Յունաց իմաստնոց դէմ, Ժ. Զ. զիսոյն մէջ (250-253 էջ) յա-
կարծ մի նոր խնդիր կը յարուցանէ Եգիպտոսի 'ի դիմաց Հակոտակորդաց, մի
այնպիսի խնդիր՝ որ իսկոյն ընթերցողն կ'իմանայ թէ անյարմար է տեղւոյն,
անկապ և անիմաստ, եթէ իւր նախորդին Հետ Համեմատելու: Ընդ, որ է

1. Օրինակ իմն, Ս. Բարսեղ (Վեցոր. 133 էջ) կ'ըսէ. «Եւ գնացք իմն են յաշ-
խարհին Եւրպայեացոց... զի ըստ յաւելուին և ըստ աճելն Լուսնի՝ պատեն զեռաւ
շարժիլ, ընդ նմին աճեացեն և ընդ նմին պակասեն » և այլն. իսկ Եգիպտոսի (215 էջ) կ'ը-
սէ. « Եւ յԵւրոպոյ տեղիք ինչ են ծովուց, որոյ ջուրն ըստ աճել Լուսնին՝ աճէ, և
ըստ ինուելն՝ լնու, և ըստ պակասելն՝ պակասէ », և այլն: —

Դարձեալ կ'ըսէ Ս. Բարսեղ (Վեց. 14 էջ). « Եւ օգ ևս դարձեալ ընդ երկրի
խառն է... զի յորժամ ընդունիցի երկիր զխոնաւութիւն և զճերմութիւն արեգա-
կան, փոզէ յերկրէ օդ՝ վերանայ ելանէ 'ի նմանութիւն գոլորշւոյ » և այլն. իսկ Եգ-
իպտոսի (219 էջ). « Եւ զի ընդ երկրի նոյն օգ խառն է, յորժամ անձրեւ
լեալ իցէ և արեւ տայցէ, 'ի գոլորշոյն՝ որ 'ի սրտէ երկրին 'ի վեր ցնլանայ՝ յայտ
յանգիման երևի » և այլն. այսպիսի նմանութեանց յաճախ կը պատահիմք, զորս
աւելորդ է մի առ մի մէջ բերել աստ: —

2. Իւր Յաղագս երկնից գարդոց կոչուած մատենին մէջ, գրեթէ բառ առ բառ
և ոպն առ ոպն Հետեւէր է Ս. Բարսեղ ճառից:

Քրիստոսի դաստեան մասին՝ թէ ինչո՞ւ այնքան ուշացեր է։ Գրութեան ունեն, բերած պատճառներն և նմանութիւնքն խիստ գեղեցիկ և ճարտար են. բայց միթէ կարող էր Եզնիկ զննել զայն Գ. գրոց մէջ, իսկոյն փոխադասելով քարանձանաց և իմաստակութեանց ետեւը. բնաւ ամենեւին ոչ. եթէ յատուկ կարգաբանութեան նայինք, աւելի կը պատշաճէր զննել զայն յերկրորդ գիրսն (յէթ 163-167), ուր արդէն քրիստոնէական կրօնից խնդիրներու վերայ խօսեր էր։ Եւ ահայայտնի ապացոյց, որ կը հաստատէ մեր 'ի սկզբան ըրած ենթադրութիւնը, թէ ձեռք մտեր է Եզնիկայ գրոց մէջ և խանգարեր է նորա կարգաբանութիւնը. որոյ ուրիշ պայծառ ապացոյց մ'է ևս անմիջապէս անոր հետեւեալ գլուխն ԺԷ (235-240), յորում գարծեալ մի այլ խնդիր կը յուզէ, այն է հիւղեայ խնդիրն, որոյ վրայ արդէն բաւական իսկ ընդարձակ խօսեր է Ա. գրոց մէջ. իսկ աստ գրեթէ նոյն ըսածներուն կրկնութիւն կրնայ համարուիլ, կամ թէ լաւագոյն ևս, ամբողջական բովանդակութիւն մի՛ աւելի ամփոփ ոճով, գեղեցիկ իմաստիւք և բնական օրինակօք։ Բնաւ տարակոյս չի ծագիր թէ Եզնիկայ է այս հատուածս, ինչպէս յայտնի է կորովաբան և պերճախօս ոճէն, և գարծեալ յստակ և վսեմ լեզուէն. այլ թէ ինչ կապ ունի իւր նախորդին հետ, որ գրոց կը վերաբերի, ուստի՞ եկեր հոս մտեր է։ Եթէ անմիջապէս առաջին տողերը կարդալու լինիմք, յայտնի կը լինի թէ շարայարութիւն է, հետեւանք է նախընթաց խօսքին, և ոչ առանձին մաս կամ գլուխ. « Եւ յայսմ ամենայնէ յայտ է », և այլն։

Եթէ կարելի լինի ընել մի ենթադրութիւն սոյն բանիս նկատմամբ, որ աւելի հաւանական և ստուգութեան մերձ ըլլայ, այս է, թէ սոյն գլուխս կամ հատուածս է իրրու վերջնական մի ամբողջ եզրակացութիւն երեք առաջին գրոց։ Վասնզի նախ մէջն կ'ակնարկէ Ա. գիրքը, յորում հիւղեայ և չարեաց խնդրոյն վրայ խօսեր է, այսու բանիւք. « Եւ յայսմ ամենայնէ յայտ է, եթէ ոչ հիւղ ինչ, որ է նիւթ, էր ընթերակաց Աստուծոյ... և 'ի նմանէ չարեաց յաշխարհ մտեալ, որպէս ասեն աղանդքն », և այլն (235 էջ)։ Բ. կ'ակնարկէ 'ի նմա Պարսից գենը (որ է Բ գիրքն), այսու բանիւք. « Եւ ոչ այլ ոք արարիչ չարեաց, որպէս մոգքն խաբին թէ Խորամանն արար զչարիս » և այլն։ Գ. Բունաց իմաստունքը կը յիշատակէ անդ, որոց դէմ Գ. գրոց մէջ խօսեցաւ, հետեւեալ բանիւք. « Ուստի ('ի հիւղեայ) ասեն Բունաց իմաստունքն զարարածս արարեալ », և այլն. ինչպէս նաև յէջն 240, « Եւ արդ 'ի զուր իսկ ջանակն իմաստունքն Բունաց ճառել զԱստուծոյ » և այլն։ Եւ ապա սոցա ամենուն դէմ գեղեցիկ կերպով կը զննէ իւր վճիռները, մանաւանդ թէ քրիստոնէական հաւատոց՝ որ է միակ ճշմարիտ իմաստասիրութիւն. ուստի հարկ կը համարիմ նոյն իսկ Հեղինակին յատուկ բանիւք կնքել աստ խօսքը, որպէս զի մի գուցէ խանգարենք նորա պարզութիւնը, գեղեցկութիւնը և վսեմութիւնը. « Արդ մի ոք ինքնակաց զաշխարհս իշխեսցէ համարել, և մի ընթերակաց ինչ Աստուծոյ. զի մի գմեմութիւն զօրութեան նորա խախտիցէ. այլ ամենեցուն նա ընորհեաց զլիննն, որք ոչն էին յառաջագոյն։ Ընդէր արուեստագէտ միայն նիւթոյ իմիք զնա համարիցին... Զգոյր ինչ ժամանակակից Աստուծոյ, և ոչ նիւթ ինչ՝ ուստի՞ առեալ զարարածս կազմիցէ, այլ ինքն է ամենայն բնութեանց արարիչ. և ոչ միայն կերպարանաց կազմիչ, և ոչ էութեան էականաց իրիւք խառնիչ, այլ գոյանալոյ գոյացելոյն գոյարար »։